



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն N 258-Ա

19 մայիսի մայիսի 2023թ.  
ք.իջևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 1550-Լ որոշման 10-րդ հավելվածի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N3-Ն որոշմամբ հաստատված մեթոդաբանության 21-րդ, 37-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2023 թվականի մայիսի 19-ի N /45.7/17012-2023/գրությունը և Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի մայիսի 19-ի N 255-Ա հրամանը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 880-Ա հրամանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

19.05.2023

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ